

մինչև հիմա անհայտ փաստեր էր պարունակում: Մանոթ էր նայրանդյանը Բոսնիայի և Սերբիայի հետ: Վ. Ռ. Զատովին նա երբ և որտեղ կարող էր հանդիպած լինել: Ինչ էլին ուզում ասել Օգարյովը և Գերցենը Ն. Սերպո-Սուլովիչիին գրած 1862 թ. հունիսի 8-ի թվագիրը նամակում: Մարկո Վովչոկին ճանաչում էր նայրանդյանը: Ինչ էլ բնկած «երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության նախաբանի հիմքում: Ինչպես «երկրագործությունը» հասավ Ռուսաստան: Ինչ է նշանակում «երկրագործության» մեջ գործածված «առաքյալ» հասկացությունը: Ահա այն հարցերի մի մասը, որոնց զեկուցողը տվեց փաստերով հիմնավորված համոզիչ պատասխաններ:

«Նայրանդյանի կերպարը Բաֆֆու ստեղծագործություններում» զեկուցման մեջ բանասիրական գիտությունների թեկնածու Մ. Նահապետյանը վերլուծեց նշանավոր վիպասանի այն երկերը, որոնցում կան մեծ հեղափոխական ղեկավարներ հիշեցնող գրական տիպեր: Նա ցույց տվեց նայրանդյանի անձնավորության և գործի նկատմամբ Բաֆֆու տածած սերն ու ակնածանքը, որը վերջինիս մոտ նաև աշխարհայացքային բովանդակություն ունի:

Բանասիրական գիտությունների թեկնածու Մ. Ավդալբեգյանը զեկուցեց «Հայ հին գրականությունը նայրանդյանի գեահատմամբ» թեմայով: Նա բազմաթիվ փաստերի հիման վրա ցույց տվեց, որ նայրանդյանը բազմիցս անգրագարծել է հայկական հին մշակույթի հարցերին, տվել հիշատակ հետաքրքիր պատասխաններ: Նայրանդյանը հայ հին գրականության գեահատման հարցում ելնում էր ոչ միայն ժամանակի լուսավորական գաղափարների տեսանկյունից, այլև հասարակական անհրաժեշտություն դարձած նոր գեալիստական գրականության դարգացման պահանջների տեսանկյունից: Նա բարձր է գնահատել խորենացուն և հիեզերող դարի մեր մյուս «առաջնորդներին, որոնք ունեն «առողջ և կենդանի հայեցողությունը»: Նայրանդյանը հին ժառանգության լավագույն մասի արժեքավորման և սղտագործման նախանձախնդիրներից մեկն է եղել իր ողջ կյանքի ընթացքում:

Ն. ԱՎԴԱԼԲԵԳ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ

Ապրիլի 7—8-ր տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի կրտսեր գիտաշխատողների դիտական նստաշրջանը, որտեղ լսվեցին 9 զեկուցումներ: Նստաշրջանի մասնակիցները լսեցին ինստիտուտի կրտսեր գիտաշխատող Վ. Ղազարյանի «Պատմագրության տիրապետող ուղղության բննադատությունը Արովյանի կողմից» զեկուցումը: Նա նշեց, որ Արովյանն առանձնահատուկ ուշադրություն է ցուցաբերել դեպի պատմության առարկան, ու թեև դրա պատճառով հանդիմանության է արժանացել ազգի հեղինակավոր ուսումնականներից, բայց մինչև ուսումնառության ավարտը չի թուլացրել իր գիտական հարցասիրությունը, չկամենալով ականջ դնել նրանց, ովքեր ցանկանում էին զամել նրա միտքը: Չամչյանի պատմագրության տրադիցիոն մակարդակին: Արովյանի կողմից պատմության ուսումնասիրումը զուտ հետաքրքրության բնույթ չի կրել: Նա ձգտել է պատմագիտության բնագավառում ձեռք բերված եվրոպական առաջադիմությունը ևս տեղափոխել իր հայրենիք: Արովյանի կողմից պատմությանը դիմելու բուն պատճառը եղել է ինչպես եվրոպական աշառու, այնպես էլ առավել ևս ցարական ու հայկական պատմագրության մեջ տիրապետող հետադեմ ուղղության կողմնակիցների դեմ պայքարելու անհրաժեշտությունը, որի սոցիալ-քաղաքական իմաստը, ինչպես կայսրության բոլոր ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի վրա ծանրացած ցարական բռնակալության թոթափումն էր և երկրում առաջավոր բուրժուական արտադրահարաբերությունների ու բուրժուա-դեմոկրատական գաղափարների հաստատումը:

«Պատմագրության մեջ ներսև Աշտարակեցու գործունեության գնահատման հարցի շուրջը» զեկուցումով հանդես եկավ ասպիրանտ Ն. Սարուխանյանը: Զեկուցումն արժեքավոր էր նրանով, որ այնտեղ փորձ է արվում բնութագրել Ներսև Աշտարակեցու վերելքի ու վայրէջքի մի քանի կողմերը, վեր ևն հանվում նախահեղափոխական հայ պատմագրության մեջ նրա գործունեության վիպականացման պատճառները: Տալով հայ պատմագրության բոլոր շատ թե քիչ նշանավոր ներկայացուցիչների թեր և դեմ կարծիքները, զեկուցողը աշխատում է քննադատական վերաբերմունք հանդես բերել նրանց նկատմամբ, բացատրել այդ կարծիքները սնող սոցիալական միջավայրը և հասարակական-քաղաքական ազդակները: Այդպես նա ներկայացրեց Ա. Նրիցյանին, Մ. Աղաբեկյանին, Կ. Գեղամյանին, Լեոյին, Բաֆֆուն և այլոց: Քննադատելով գրականության մեջ Աշտարակեցու գործունեության նկատմամբ եղած ներբողներն ու դիտվին բացա-

սումները, ղեկուցողը հանդում է այն եղրակացության, որ սովետական պատմագրությունը պետք է հաղթահարի այդ միակողմանիությունը, վեր հանի Լեռնարակեցու գործունեության դրական ու բացասական կողմերը, պատմական զարգացման ընդհանուր պրոցեսի մեջ ներկայացնի նրա իսկական տեղը:

«Հայ դպրոցի զարգացումն Լեռնարակովկասում 1870—1885 թթ.» գեկուցման մեջ կրտսեր դիտաշխատող Վ. Երկանյանը հանգամանորեն պատմեց հայ դպրոցի զարգացման էտապների մասին, նշելով որ 1850—1860-ական թվականը զաղափարական նախապատրաստության տարիներ էղան հետագա շրջանի կրթական գործի կազմակերպման ու ծավալման համար: 1870-ական թվականներից ունալ պայմաններ ստեղծվեցին կենսագործելու հայ մեծ լուսավորիչների երազանքները: Ինչ ժամանակաշրջանում հայ դպրոցը թևակոխեց իր զարգացման նոր շրջանը, ապա-նովվեց նրա աշխարհիկ բնույթի հաղթանակը: Մնվելով ու զորանալով իր նախորդների թողած հարուստ ժառանգությամբ, հրապարակի վրա սկսեց գործել հայ մանկավարժական միտքը: 70-ական թվականները ցույց տվեցին, որ հայ դպրոցը զնաց իր մեծ լուսավորիչների նախանշած բաղիով, ապացուցելով նրանց քարոզած զաղափարների կենսականությունն ու խոր ժողովրդա-կանությունը:

Կրտսեր դիտաշխատող Հ. Ղարադյոդյանը «Ուրարտեների թվականները ընդհանուր լեզվա-րանության լույսի տակ» գեկուցման մեջ փաստական հարուստ նյութի հիման վրա խուռի-ուրարտական և հնդեվրոպական լեզուների թվականների դուզահեռ ուսումնասիրությունից հանդում է այն եղրակացության, որ այդ լեզուները սկզբնական շրջանում եղել են ցեղակից, սակայն բա-ժանվելով իրարից, զարգացել են ուրույն նանապարհով: Հետագայում նրանք նորից շփվել են միմյանց, որի ժամանակ հնդեվրոպական լեզուները փոխառություններ են կատարել խուռի-ու-րարտական լեզուներից: Իսկ խուռի-ուրարտական և իրերո-քարթվելական լեզուները սկզբնական շրջանում ոչ մի կապ չեն ունեցել իրար հետ: Իրերո-քարթվելական լեզուները նախ շփվել են հնդեվրոպական լեզուների հետ, փոխառություններ կատարել նրանցից և նոր միայն հանդիպել ու կրել խուռի-ուրարտական լեզուների ազդեցությունը: Պարզվում է նաև, որ զարգացման ցածր աստիճանում կովկասյան լեզուները շփման մեջ են դտնվել ինչպես խուռի-ուրարտական, այնպես էլ հնդեվրոպական լեզուների հետ, այնինչ միևնույն շրջանում նրանք ոչ մի կապ չեն ունեցել իրերո-քարթվելական լեզուների հետ: Հեղինակը ճիշտ է համարում Գ. Բ. Ջահուկյանի տեսու-թյունը հնդեվրոպական և խուռի-ուրարտական հիմք լեզուների ցեղակցության վերաբերյալ:

Լեսպիրանտ Լ. Պետրոսյանը «Մոքալաքների դասի մասին» գեկուցման մեջ խոսում է Վրաս-տանում ապրող հայերի մոքալաք դասի մասին: Մոքալաքին վրացերեն բառ է, որ հայերեն թարգմանվում է քաղաքացի: Իյն մի տեսակ պատվանուն է, որ տրվում էր վրաց արքաների կողմից Թբիլիսի և Գորի քաղաքի այն բնակիչներին, որոնք ունեին քաղաքացիական հին ծագում և վճարում էին հատուկ հարկ՝ մախթա: Իինչև XIX դարի սկզբները մոքալաքները միայն հա-յերն էին:

Մանկա-պատանեկան մամուլի պատմությունը կազմում է հայ պարբերական մամուլի պատ-մության անբաժան մասը, նրա հետաքրքիր հատվածներից մեկը: Իրա համառոտ տեսությունն էր վերաբերվում կրտսեր դիտական աշխատող Ս. Նաղարյանի գեկուցումը, ուր նա անդրադառ-նում է «Թուրակ Հայկադյան», «Ռուրաստան մանկանց համար», «Լեվետաբիր տղայոց համար», «Թատրոն բարեկամ մանկանց», «Լեդրյուր» և «Հասկեր» ամսագրերի գործունեությունը:

«Լեռնամտահայ տարեգրքերի մի քանի առանձնահատկությունները XIX դարի առաջին քա-ռորդում» գեկուցման մեջ Ս. Լեղանալյանը խոսում է պոլսահայ ժեկուտիներուն տարեցույցի, «Կավոռոշին տարեգրքի», Թեոդիկի «Լեմենուն տարեցույցի», «Երդիծական տարեցույցի» և այլ տարեցույցների մասին, նշում տարեցույցային դրականության պահպանողական և դեմոկրա-տական թևերի մեջ եղած պայքարը:

Կրտսեր դիտական աշխատող Գ. Պինդիրյանի «Հակաունիթորական շարժման մի քանի նախադրյալներ Ուկրաինայի հայ դադուիներում XVIII դարի 20—30-ական թթ.» գեկուցման մեջ վերլուծման է ենթարկվում տնտեսական, սոցիալ-քաղաքական և դադափարական բնույթի մի շարք ազդակներ, որոնք նախորդեցին հակաունիթորական շարժմանը Ուկրաինայի հայ դադուի-ներում:

Հետաքրքրությամբ լսվեց նաև Լ. Չալկյանի «Պինիիուս Լվադը և նրա հադորդած տեղեկու-թյունները Հայաստանի մասին» գեկուցումը:

Ձեկուցումների շուրջը ելույթ ունեցան Հ. Վարդանյանը, Հ. Ղաղարյանը, Վ. Ոսկանյանը, Գ. Սարգսյանը և ուրիշներ: Նստաշրջանի արդյունքներն ամփոփեց պատմության ինստիտուտի դիրեկտոր Գ. Լ. Գալոյանը:

Է. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ